ԵՄ – ՀԱՅԱՍՏԱՆ ԹՎԻՆԻՆԳ ԾՐԱԳԻՐ

Գործողություն 4.5

Ձեռքբերումների կատարման դիտարկում և առաջարկություններ ապագայի համար

Սոցիալական բացառումների վիճակագրություն

Երևան, 2017թ. հունիսի 13-16

STATISTICS DENMARK

Պարտադիր արդյունք

Սույն գործողության հետ կապված պարտադիր արդյունքը ՊԱ5

Սոցիալական բացառումների ներդրված և հաշվարկված վիճակագրություն

Չափանիշ

- Նախագծվել է հարցաթերթ սոցիալական բացառումների փորձնական հետազոտության համար (2015թ. հոկտեմբեր)
- Իրականացված փորձնական հետազոտություն (2015թ. դեկտեմբեր)
- Հաշվարկված փորձնական արդյունքներ (2015թ. դեկտեմբեր)
- Ներկայացված սոցիալական բացառումների ցուցանիշների համակարգ (2017թ. հուլիս)

4.5-ի նպատակը և սպասվող արդյունքը

Նպատակը

- Քննարկել բաղադրիչի կարգավիճակը ծրագրի սկզբից
- Քննարկել ծրագրի արդյունքների կարգավիճակը
- Պատրաստել առաջարկություններ ձեռքբերումների կայունության հետ կապված
- Պատրաստել առաջարկություններ ՀՀ ԱՎԾ ապագա աշխատանքի համար ծրագրի ավարտից հետո
- Նույնականացնել չլուծված հարցերը և հետագա աջակցության կարիքները, եթե այդպիսիք կան

4.5-ի նպատակը և սպասվող արդյունքը

Սպասվող արդյունքը

Առաքելության զեկույց, որը կընդգրկի հետևյալը.

- Ծրագրի արդյունաների կարգավիճակը
- ՁԵռքբերումների կայունություն
- Առաջարկություններ ապագայի համար (կարճաժամկետ և երկարաժամկետ)
- Լրացուցիչ կարիքների նույնականացում
- Չլուծված հարցեր

Բաղադրիչի կարգավիճակը ծրագրի սկզբից

ՀՀ ԱՎԾ-ն ուներ լավ մշակված և սպառման հիման վրա հաշվարկված աղքատության ցուցանիշներ, ինչպես նաև զրկվածության բազմաչափ ցուցանիշներ

Կայացվեց որոշում ուշադրությունը կենտրոնացնել սոցիալական բացառումների և նյութական զրկվածության եվրոպական ցուցանիշների վրա, որպեսզի հնարավոր դառնա միջազգային համադրումներ կատարելը

Ծրագրի արդյունքների կարգավիճակը

- Նյութական զրկվածության վերաբերյալ անհրաժեշտ հարցերն ընդգրկվել են ՏՏԿԱՀ հարցաթերթի մեջ
- Հարցաթերթը հաջողությամբ փորձարկվել է փորձնական հետազոտությամբ 2015թ-ի վերջում, և 2016թ.-ին ամբողջությամբ ինտեգրվել է ՏՏԿԱՀ-ի մեջ
- ԵՄ նյութական զրկվածության տարրերը հաջողությամբ հավաքագրվել են 5184 տնային տնտեսությունների համար 2016թ. ՏՏԿԱՀ-ում

Ծրագրի արդյունքների կարգավիճակը

- Տվյալների որակը շատ լավն է: Տպավորությունն այն է, որ հավաքագրված տվյալները համահունչ են այլ տեղեկատվության հետ, ինչպիսին է տնային տնտեսությունների ծայրը ծայրին հասցնելու կարողությունը
- Հավաքագրված տվյալներն ապահովում են անհրաժեշտ տեղեկատվություն նյութական զրկվածության վերաբերյալ միջազգային համադրումներ կատարելու համար
- Իրականացվել է ծրագրավորման նախնական վերապատրաստում և վերլուծության համար անհրաժեշտ SPSS կոդ

Ձեռքբերումների կայունություն

Ռիսկեր, որոնք կարող են վտանգել կայունությունը

- Նյութական զրկվածության Եվրոստատի նոր ցուցանիշի շեմերի վերաբերյալ դեռևս վերջնական որոշում չի կայացվել
- Տնային տնտեսությունների հետազոտությունների բաժինը կախված է եղել տեղեկատվական տեխնոլոգիաների վարչությունից աղյուսակների արտադրման հարցում, և ռեսուրսները եղել են սահմանափակ
- Ընդարձակ սոցիալական հետազոտություններ իրականացնելը թանկ արժե

Առաջարկություններ ապագայի համար

Հրապարակման համար տվյալները պատրաստ են

ՀՀ ԱՎԾ-ն պետք է հրապարակի արդյունքները և հետևի տարածման ծրագրին: Առաջարկվում է հրապարակումն անել հետևյալ միջոցներով.

- *Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը* մինչև սեպտեմբեր ամիսը
- Statbank մինչև տարեվերջը

Արդյունքների հետագա վավերականացում

Ցուցանիշները պետք է խաչաձև ստուգվեն SS եկամտի և սպառման մակարդակներով: Արդյունքները պետք է վավերականացվեն և պատշաճ կերպով բացատրվեն

Առաջարկություններ ապագայի համար

Հետևել Եվրոստատ թարմացվող մեթոդաբանությանը

Եվրոստատի ԵԿՊՎ կայքին: Նյութական զրկվածության վրա աշխատանքը շարունակական գործընթաց է Եվրոստատում:

Մշակել ազգային ցուցանիշ

Եվրոստատի ցուցանիշը նախատեսված է եվրոպական կոնտեքստի համար: Շարունակել ուշադրությունը սևեռել զրկվածության ազգային ցուցանիշների հայկական կարիքների և նախընտրությունների վրա, միաժամանակ պահպանելով ներդաշնակությունը ԵՄ ստանդարտների հետ: Նպատակն է ԵՄ ցուցանիշը լրացնել նյութական զրկվածության ազգային ցուցանիշներով:

Առաջարկություններ ապագայի համար

Աշխատանքի նոր հոսք տեղեկատվական տեխնոլոգիաների համար

- Ապահովել, որպեսզի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժինը ունենա մուտքի հնարավորություն տվյալներին SPSS-ով տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության հետ համագործակցությամբ
- Տեղեկատվական տեխնոլոգիաների վարչությունը պետք է նախապատրաստի տվյալների բազան և կատարի նախնական աշխատանքը հմապատասխան տվյալների խմբեր կազմելու գծով
- Տնային տնտեսությունների հետազոտությունների բաժինը պետք է հաշվարկի աղյուսակները հաշվետվությունների համար
- Աշխատանքի ընթացքում համապատասխան վերապատրաստումն աշխատակիցների համար կարևոր է: Ուսուցման ժամանակահատվածներում անցկացնել օրեկան առնվազն 30 րոպե տևողությամբ նպատակային պրակտիկա

Առաջարկություններ ապագայի համար

Դիտարկել վարչական ռեգիստրների ընդլայնված օգտագործումը

Երկարաժամկետ կտրվածքով վարչական ռեգիստրները կարող են նաև օգտակար լինել ռեսպոնդենտների բեռի նվազեցման և ստուգաճշտման համար:

Լրացուցիչ աջակցության կարիքների նույնականացում

- Վիճակագրական ծրագրավորման դասընթացներ
- Հետազոտությունն իրականացնելը թանկ արժե և սրա համար պահանջվում է ֆինանսավորում

Չլուծված հարցեր

- Եվրոստատում երեխաների նյութական զրկվածության ցուցանիշները դեռևս ավարտուն տեսքի չեն բերվել: Հենց որ Եվրոստատն ավարտի առաջարկը, ՀՀ ԱՎԾ-ն պետք է կարողանա այն հաշվարկել, քանի որ բոլոր հարցերը ՏՏԿԱՀ հարցաթերթի մաս են:
- Նյութական զրկվածության նոր ցուցանիշի համար կոնկրետ շեմերը դեռևս հայտնի չեն: